ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 21

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի
Կառավարման խորհրդի 2007թ. հոկտեմբերի 16-ին ժամը 16:30-ին
կայացած հերթական նիստի

Նիստը նախագահում էր.

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը

Մասնակցում էին՝

Կառավարման խորհրդի անդամներ.

Հովիկ Աբրահամյանը	ՀՀ տարածքային կառավարման նախարար, ՀՀ Փոխվարչապետ
Վարդան Խաչատրյանը	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար
Դավիթ Լոքյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Անդրանիկ Մանուկյանը	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Նազելի Վարդանյանը	«Հայաստանի անտառներ» բնապահպանական ՀԿ-ի տնօրեն
Տոնական Ղազարյանը	«Շենիկ» Զրօգտագործողների ընկերությունների միության նախագահ
Վանիկ Սողոմոնյանը	Ֆերմերների ազգային միավորում ՀԿ-ի նախագահ
Վարդան Համբարձումյանը	«Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության նախագահ
Կարինե Բաղդասարյանը	«Հայաստանի միջեկեղեցական բարեգործական կլոր սեղան» հիմնադրամ /Կարեն Նազարյանի փոխարեն, լիազորագրով, լիազորագիրը կցվում է/

Նիստից բացակայում էր.

Վահրամ Ներսիսյանցը	ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական

Նիստին հրավիրված էր.

Անդրանիկ Անդրեասյանը	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ

Նիստին մասնակցում էին նաև.

Արա Հովսեփյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն
Ռուզաննա Ղազարյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, Կառավարման Խորհրդի քարտուղար
Մայրոն Հիրնիակը	Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի փոխտնօրեն
Գայանե Հարությունյանը	Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի գործերի կառավարիչ
Լևոն Մարտիրոսյանը	ՀՀ վարչապետի օգնական
Սիմոն Ղոնաղչյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ
Հովհաննես Սահակյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ
Մերի Հարությունյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ

Նիստի օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի «68 պոմպակայանների վերականգնման ու արդյունավետության բարձրացման նպատակով տեխնիկա-տնտեսական հիմնավորում IA-06/006 խորհրդատվական մրցույթի համակցված տեխնիկական և ֆինանսական գնահատման արդյունքների քննարկում և հաստատում:

2. Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի «Ոռոգման յոթ ջրամբարների կառուցման /վերականգնման նպատակով վերջնական նախագծում և շինարարության վերահսկում», IA-07/003 խորհրդատվական ծառայության մրցույթի կազմակերպությունների նախաորակավորումն անցկացնելու վերաբերյալ քննարկում և հաստատում:

3. Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի «Ոռոգման ուք ինքնահոս համակարգերի կառուցման նպատակով վերջնական նախագծում և շինարարության վերահսկում» մրցույթի առաջարկների տեխնիկական գնահատման արդյունքների քննարկում և հաստատում:

4. Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի «Ոռոգման չորս ինքնահոս համակարգերի կառուցման նպատակով վերջնական նախագծում և շինարարության վերահսկում» մրցույթի առաջարկների տեխնիկական գնահատման արդյունքների քննարկում և հաստատում:

5. Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի «Երրորդ կարգի ոռոգման ջրանցքների վերականգնման նախագծման և շինարարության վերահսկման»(IA-07/002) խորհրդատվական ծառայությունների մատուցման շահագրգռվածության հայտ ներկայացրած կազմակերպությունների կարճ ցուցակի կազմման արդյունքների և Առաջարկներ ներկայացնելու հրավերի (ԱՆՀ) քննարկում և հաստատում:

6. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ի և «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ի միջև 2007թ. հունվարի 15-ին ստորագրված Իրականացնող կազմակերպության պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ քննարկում և հաստատում:

7. Խորհրդատվական ընկերությունների ընտրության ստանդարտ Առաջարկների ներկայացման հրավերի քննարկում և հաստատում:

8. «ՀՄՀ-Հայաստան» ծրագրի աուդիտորական ընկերության ընտրության նպատակով խորհրդատվական ընկերություններից ստացված տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքների քննարկում և հաստատում:

9. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ -Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի կողմից 2007թվականի հուլիսի 25-ին հաստատված գնումների պլանում տեղ գտած փոփոխությունների քննարկում և հաստատում:

10. Այլ հարցեր.
    - տեղեկատվություն՝ 2007թ. սեպտեմբերի 29-ին կայացած «ՀՄՀ-Հայաստան» Ծրագրի Շահառուների խորհրդի /ՇԽ/ 2-րդ կազմի ընտրության և դրա արդյունքում՝ «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհուրդ պատվիրակված ՇԽ անդամների փոփոխություն կատարելու անհրաժեշտության մասին:

Նիստի ընթացքում.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հաստատել Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի «68 պոմպակայանների վերականգնման ու արդյունավետության բարձրացման նպատակով տեխնիկա-տնտեսական հիմնավորում IA-06/006 խորհրդատվական մրցույթի համակցված տեխնիկական և ֆինանսական գնահատման արդյունքները:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հաստատել Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի «Ոռոգման յոթ ջրամբարների կառուցման /վերականգնման նպատակով վերջնական նախագծում և շինարարության վերահսկում», IA-07/003 խորհրդատվական ծառայության մրցույթի կազմակերպությունների նախաորակավորումն անցկացնելու նպատակով Շահագրգռվածության ցուցաբերման հրավերը:

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հաստատել Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի «Ոռոգման ութ ինքնահոս համակարգերի կառուցման նպատակով վերջնական նախագծում և շինարարության վերահսկում» մրցույթի առաջարկների տեխնիկական գնահատման արդյունքները:

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հաստատել Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի «Ոռոգման չորս ինքնահոս համակարգերի կառուցման նպատակով վերջնական նախագծում և շինարարության վերահսկում» մրցույթի առաջարկների տեխնիկական գնահատման արդյունքները:

Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հաստատել Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի «Երրորդ կարգի ոռոգման ջրանցքների վերականգնման նախագծման և շինարարության վերահսկման»(IA-07/002) խորհրդատվական ծառայությունների մատուցման շահագրգռվածության հայտ ներկայացրած կազմակերպությունների կարճ ցուցակի կազմման արդյունքները և Առաջարկներ ներկայացնելու հրավերի (ԱՆՀ) տեքստը:

Օրակարգի 6-րդ հարցի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ի և «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ի միջև 2007թ. հունվարի 15-ին ստորագրված Իրականացնող կազմակերպության պայմանագրում «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փոփոխությունները:
Միաժամանակ որոշվեց՝ հաստատված փաստաթղթերում արտարժույթով հաշվարկվող գումարների առնչությամբ որպես արտարժույթի փոխարժեք ընդունել Կառավարման Խորհրդի կողմից այդ փաստաթղթերի հաստատման օրվա, այն է՝ 2007 թվականի հոկտեմբերի 16-ի, ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքը:

Օրակարգի 7-րդ հարցի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հաստատել Խորհրդատվական ընկերությունների ընտրության ստանդարտ Առաջարկների ներկայացման հրավերի տեքստը:

Օրակարգի 8-րդ հարցի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հաստատել «ՀՄՀ-Հայաստան» ծրագրի աուդիտորական ընկերության ընտրության նպատակով խորհրդատվական ընկերություններից ստացված տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքները:

Օրակարգի 9-րդ հարցի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի կողմից 2007թվականի հուլիսի 25-ին հաստատված գնումների պլանում «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փոփոխությունները:

Օրակարգի 10-րդ հարցի վերաբերյալ որոշվեց՝ ընդունել ի գիտություն «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանի տեղեկատվությունը՝ 2007թ. սեպտեմբերի 29-ին կայացած «ՀՄՀ-Հայաստան» Ծրագրի Շահառուների խորհրդի /ՇԽ/ 2-րդ կազմի ընտրության և դրա արդյունքում՝ «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհուրդ պատվիրակված ՇԽ անդամների փոփոխություն կատարելու անհրաժեշտության մասին:

Միաժամանակ հանձնարարվեց Ա. Հովսեփյանին՝ սահմանված կարգով ՀՀ Կառավարություն ներկայացնել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման Խորհրդի կազմում համապատասխան փոփոխությունները կատարելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

Օրակարգի նախապես ներկայացված և սույն նիստի սկզբում հաստատված հարցերի լիովին սպառումից հետո Կառավարման Խորհրդի նախագահի առաջարկությամբ տեղի ունեցավ Ծրագրին առնչվող այլ՝ ներքոհիշյալ, հարցերի քննարկում.

ա/ 68 պոմպակայանների վերականգնման ու արդյունավետության բարձրացման աշխատանքների կազմակերպման և իրականացման ժամանակ մեկ անգամ ևս վերանայել առաջնահերթությունները, կազմել նոր ցանկ՝ դրանում վերադասավորելով պոմպակայանների

անվանումները՝ ըստ դրանց վերականգնման աշխատանքների առավել հրատապության /առաջարկն արվեց պ-ն Դ. Լոքյանի կողմից/:

Առաջարկը չընդունվեց, նկատի ունենալով, որ «ՀՄՀ-Հայաստան» Ծրագիրն արդեն իսկ հաստատված է՝ բոլոր բաղադրիչներով առաջնահերթությունների, այդ թվում՝ պոմպակայանների վերականգնման առաջնահերթությունների, դրանց կազմակերպման և իրականացման ժամկետների և համապատասխան գումարների հստակ ամրագրմամբ: Որևէ պոմպակայանի հրատապ վերականգնման անհրաժեշտության պարագայում պետք է ներկայացվի հիմնավորված առաջարկություն ՀՀ կառավարությանը;

բ/ «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրենի կողմից 1-ին, 2-րդ և 3-րդ փաթեթներում ներառված ճանապարհների վերականգնման համար նախատեսված գումարների ոչ բավարար լինելու վերաբերյալ զեկույցի ներկայացում /առաջարկն արվեց պ-ն Ա. Մանուկյանի կողմից/: Նշվեց, որ Ծրագրով նախատեսված աշխատանքների համար սահմանված գումարների անբավարարությունը հետևանք է հանրապետությունում արտարժույթի փոխարժեքի նվազման, և առաջարկվեց, հաշվի առնելով առաջացած գումարի սղության պայմաններում կատարել աշխատանքների իրականացման առաջնահերթությունների կամ ծավալների փոփոխություն:

Առաջարկը չընդունվեց: Որոշվեց աշխատանքներն իրականացնել հաստատված Ծրագրով, իսկ հետագայում որևէ աշխատանքի համար ֆինանսական միջոցները չբավարարելու պարագայում, յուրաքանչյուր առանձին դեպքում հարցը դնել առանձին քննարկման և կայացնել համապատասխան որոշում:

Միաժամանակ, ՀՀ վարչապետ, «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանի կողմից հիշեցվեց ս.թ. հունիսի 11-ին ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» Կորպորացիայի գլխավոր գործադիր տնօրեն՝ դեսպան Ջոն Դանիլովիչի Հայաստանի Հանրապետություն պաշտոնական այցի ժամանակ, վերջինիս կողմից արված այն հայտարարության մասին, ըստ որի՝ ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» Կորպորացիան հակված է Հայաստանի Հանրապետությանը ընդառաջելու «Հազարամյակի մարտահրավեր» 2-րդ ծրագրի սկսման հարցում: Հաշվի առնելով այդ հայտարարությունը՝ ՀՀ վարչապետի կողմից առաջարկվեց ֆինանսական միջոցների անբավարար լինելու հետևանքով ծրագրում ընդգրկված, սակայն չիրականացված աշխատանքները նախատեսել հաջորդ ծրագրի նախագծում ներառելու համար:

գ/ Ծրագրի բոլոր բաղադրիչներով իրականացվող գործառույթների ընթացակարգերի պարզեցման ուղղությամբ «Հազարամյակի մարտահրավեր» Կորպորացիայի գլխավոր գործադիր տնօրեն՝ դեսպան Ջոն Դանիլովիչի հետ քննարկելու առաջարկը /պ-ն Հ. Աբրահամյան/, նույնպես չընդունվեց, նկատի ունենալով, որ այդ ընթացակարգերի հիմքում ընկած են Համաշխարհային Բանկի Ընթացակարգերը, որոնք առանձին երկրների առաջարկությամբ փոփոխման ենթակա չեն:

Այնուհետև ՀՀ վարչապետ, «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը տեղեկացրեց, որ հաջորդ օրը՝ ս.թ. հոկտեմբերի 17-ին, ինքը պաշտոնական այցով մեկնելու է Վաշինգտոն, և այդ այցի շրջանակներում նախատեսված է հանդիպում նաև «Հազարամյակի մարտահրավեր» Կորպորացիայի գլխավոր գործադիր տնօրեն՝ դեսպան Ջոն Դանիլովիչի հետ:

Հարցերի սպառումից հետո նիստն ավարտվեց:

«ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ»
ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

Նիստը արձանագրեց՝
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման Խորհրդի քարտուղար,
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու
Ռ. Ղազարյանը